

Մինչեւ Ո՞ր Եւ Մինչեւ Ե՞րբ

Մելգոնեանը կրկին վաճառքի սեղանին վրայ: Մարդիկ բորբոքած կը գրուցեն, կը վիճաբանին, երբեմն ալ նոյնիսկ իրար կը վիրաւորեն Մելգոնեանին եւ ապագային համար:

Մի քանի օր առաջ երբ Մելգոնեանի բակը կը շրջէի, ակամայ, յիշեցի բարեկամին խօսքերը, զոր յաճախ կը յիշէր: Խօսքեր, արտասանուած ՀԲԸՄ-ի ցկեանս նախագահ Պրն. Ալեք Մանուկեանի կողմէ, իր Մելգոնեան Կրթական Հաստատութիւն այցելութեան առիթով: Նախագահը ըսած էր. «Պիտի գան օրեր եւ Մելգոնեանը պիտի դառնայ ՀԲԸՄ-ի ամենահարուստ դպրոցը: Մելգոնեանը պիտի չծախուի բացարձակապէս»:

Է՞հ, ողբացեալ նախագահ, այսօր գէթ քանի մը ժամուայ համար աշխարհ վերադառնայիր եւ տեսնէիր թէ նորօրեայ ղեկավարները ինչպէս կը վերաբերին քու ամենասիրած եւ հովանաւորած վարժարանիդ հետ:

Չէ՞ որ քու դուստրդ Տիկ. Լուիզ Սիմոն Մանուկեան քու թաղմանդ օրը, իր դամբանականին մէջ ըսած էր. «Հայրս անդիի աշխարհին մէջ կ'երեւի միայն դպրոց եւ եկեղեցի պիտի շինէ»: Մենք բոլորս, վստահաբար դուն ես ա՛ն արտայայտութիւնը ընկալեցիր որպէս գնահատական, որպէս հպարտութիւն: Այսօր կը հասկնանք որ սխալեր ենք: Քու դուստրդ «հաշի կը կարգադրէ» քու օրովդ կառուցուած կամ քեզի սիրելի սփիւռքահայ վարժարաններու հետ: Թէ Կիպրոսի մէջ, թէ սփիւռքի տարբեր գաղութներէն ներս Մելգոնեանցիներ կրկին կ'ապրին ահազանգի ժամեր:

Սկիզբը, ղեկավարներ, հակա-Մելգոնեանական արշաւի համար պատրուակեցին նիւթականը: Երբ տեսան հակազդեցութիւնը եւ մանաւանդ երբ հանրութիւնը սորվեցաւ որ դրամական խնդիր չկայ, նահանջեցին, նոր զէնքերով հարուածելու համար: Իրենց ներկայացուցած բոլոր պատճառաբանութիւնները անհիմն դուրս եկան: Նպատակը յստակ էր եւ բոլորին ծանօթ. ծախել Մելգոնեանը եւ հարստութիւնը փոխադրել Ամերիկա, քայքայել Կիպրահայ գաղութը, հարուածել Միջին Արեւելքին, հարուածել Եւրոպայի նորաստեղծ գաղութներուն ուր հայկական դպրոց չկայ:

Այս ծրագիրը՝ «փակելու», իրականացնելու համար ուղարկուեցաւ Ամերիկացի «մասնագէտ» մը՝ Պրն. Կորտրն Էնտրրսէն անուն: Վիճակը արդարօրէն քննելու եւ առողջ որոշում մը կայացնելու համար, ամբողջ Ամերիկայի մէջ հայ մասնագէտ մը չկար: Կեդրոնը կրթական պատասխանատու չունի՞: Ինչպէս կարելի է դրական արդիւնք սպասել Պրն. Էնտրրսէնէն երբ ան ուսուցիչներուն բացէ ի բաց կը յայտարարէ որ ինք հայու պէս չի կրնար մտածել եւ հայու պէս չի կրնար կողմնորոշուիլ: Կեդրոնը տեղեկութիւն քաղելու համար ինչպէս կրնայ տասնեակ հազար տոլարներ յատկացնել Պրն. Էնտրրսէնի աշխատանքին համար: Մինչ քանի մը տոլարն իսկ կը զլանայ երբ խնդրոյ առարկայ է հայ դպրոցի մը սա կամ նա պահանջը: Պրն. Էնտրրսէնի յատկացուած գումարով քանի՞ կարիքաւոր ընդունակ աշակերտ կրնայ ուսանիլ Մելգոնեանի մէջ:

Այսօր, շատ յստակ է որ մեր ղեկավարները հմայուած են իրենց Ամերիկայի դպրոցներով, անոր համար որ անոնք շահաբեր են : Չեն հետաքրքրուիր որ շրջանաւարտ աշակերտը չի կրնար քանի մը նախադասութիւն կազմել հոն հայերէնով: Մինչդէռ Մելգոնեան կու գան ոչ հայախօս հայեր, եւ կը մեկնին հայացած եւ հայախօս: Յանդգնութիւնը ունինք պոռալու մեր ղեկավարներուն երեսին. «Այո՛, Մելգոնեանը կ'արդարացնէ իր առաքելութիւնը»:

Ամենէն ցաւալին այն է, որ կ'ապրինք երկրի մը մէջ, ուր պետութիւնը պատրաստ է Մելգոնեանին օգնելու, մտահոգ է անոր ապագայով: Կիպրոսի պետութեան բարեացակամ կեցուածքն իսկ խորթ կու գայ իրենց, կ'անհանգստացնէ:

ՀԲԸՄ-ի ներկայ ղեկավարները չեն մտածեր թէ Մելգոնեանը փակելու քայլով պիտի արձանագրուին մեր պատմութեան սեւ էջերուն մէջ: Իրենց որոշումով հաւատքը պիտի քանդեն Միութենէն ներս:

Ղեկավարները Մելգոնեանի անելէն դուրս գալու համար իրենց առջեւ ունին առաջարկներ, որոնց հանդէպ խուլ մնացին մինչեւ այսօր: Պէտք է լսեն այդ առաջարկները եւ ՀԲԸՄ-ի, Միութենականի վայել որոշումով բեմ գան եւ ըսեն. «Մելգոնեանը կայ ու պիտի մնայ»: